

Հաստատում եմ՝

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան» իրմնադրամի ռեկտոր,
ունիան.գ.դ., պրոֆեսոր Ռ. Սահակյան



«27» ապրիլ 2023թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ՄԱԹԵՆԻԿ ԳԱՌՆԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

ԺԳ.00.02 Դասավանդման և ուսուցման մեթոդիկա («Ֆիզիկական կուլտուրա և սպորտ») մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Առողջ ապրելակերպի դասավանդման մեթոդիկական ֆիզիկական կուլտուրայի դասերին» թեմայով ատենախոսության վերաբերյալ:

Հայտնի է, որ դեռևս անտիկ ժամանակաշրջանից սկսած մարդու առողջության ամրապնդման համար մեծ ուշադրություն էին հատկացնում ֆիզիկական վարժություններին, որոնք առողջ ապրելակերպի ուսմունքի՝ դիետետիկայի անհրաժեշտ մասն էին: Դարեր անց, այդ հայեցակարգը հիմք հանդիսացավ բժշկության, կենսաբանության և ֆիզիկական դաստիարակության զարգացման համար:

Առողջության ամրապնդման և պահպանման խնդիրներով զբաղվում են գիտության տարբեր ճյուղերի ներկայացուցիչներ, այդ թվում նաև ֆիզիկական դաստիարակության: Այս տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունի հանրակրթական դպրոցը, որի միջով անցնում են մեր երկրի բոլոր քաղաքացիները ուսուցման 9-12 տարիների ընթացքում և որտեղ պետք է դրվեն առողջ ապրելակերպի ձևավորման վերաբերյալ գիտելիքների, կարողությունների, հմտությունների և սովորույթների հիմքերը:

Հեղինակը՝ գիտամեթոդական գրականության և կատարված բազմակողմանի ուսումնասիրությունների հիման վրա փաստում է, որ սոցիալ-տնտեսական և քաղաքական վերափոխումների պայմաններում, ժամանակակից Հայաստանում

առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում մարդու ֆիզիկական և հոգևոր առողջության ամրապնդման, առողջ ապրելակերպի ձևավորման հարցերը:

Հեղինակը պարզել է նաև, որ մեր երկրի դպրոցական կրթական համակարգում դեռևս բավարար չեն ուսումնասիրված մանկավարժական այն պայմանները, որոնք նպաստում են առողջ ապրելակերպի հաջող ձևավորմանը, բացակայում են համապատասխան մեթոդական նյութերը, հատկապես հիմնական դպրոցի 5-7-րդ դասարաններում, ինչով և պայմանավորվում է տվյալ թեմայի արդիականությունը, նրա գիտական տեսական և գործնական նշանակությունները:

Հայցորդը նպատակ է դրել մշակել և փորձարական ճանապարհով հիմնավորել 5-7-րդ դասարաններում սովորող աշակերտների առողջ ապրելակերպի ձևավորման մեթոդիկայի արդյունավետությունը ֆիզիկական դաստիարակության գործընթացում:

Ատենախոսությունը շարադրված է համակարգչային 144 էջերում, այն բաղկացած է *ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից*:

Հեղինակն իր ատենախոսության հիմնական դրույթները ներկայացրել է ուսուցիչների սեմինարներում, գիտամեթոդական կոնֆերանսներում, ամբիոնի նիստերում: Տպագրել է վեց գիտական հոդվածներ՝ հայրենական, միջազգային ամսագրերում և գիտական ժողովածուներում: Աշխատանքին կցված են ակտեր՝ հետազոտության արդյունքները մանկավարժական գործընթացում ներդնելու վերաբերյալ: Կատարված աշխատանքները կարևոր տեսական և կիրառական նշանակություն ունեն հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտների առողջ ապրելակերպի ձևավորման համակարգում, մանկավարժների մասնագիտական պատրաստության գործընթացում: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտների ֆիզիկական դաստիարակության գործընթացում՝ առողջ ապրելակերպի ձևավորման աշխտանքային ծրագրերի մշակման ժամանակ:

Ատենախոսության *առաջին գլխում*, Ս. Խաչատրյանը, ժամանակակից գիտական աղբյուրների վերլուծության արդյունքում բացահայտել է, որ վերջին ժամանակներում առավել ակտիվորեն են քննարկվում առողջ ապրելակերպի առաջնահերթության հարցերը ֆիզկուլտուրային կրթության գործընթացում և ժամանակակից սոցիալ-



տնտեսական պայմաններում երիտասադրության լիարժեք կյանքի ապահովման համար առողջ ապրելակերպի կարևոր պայման և նախադրյալ լինելը:


Վերլուծելով գրական աղբյուրները, Ս.Խաչատրյանը պարզել է նաև ֆիզիկական դաստիարակության միջոցների օգտագործմամբ՝ առողջ ապրելակերպի գոյություն ունեցող մանկավարժական մոդելները և տեխնոլոգիաները:

Հաստատվել է նաև, որ առողջ ապրելակերպն անհրաժեշտ է ձևավորել շատ վաղ տարիքից, այդ դեպքում է միայն սեփական առողջության մասին հոգածությունը, որպես կյանքի հիմնական արժեք, դառնում դպրոցականների բնական վարքագիծ:

Ատենախոսության *երկրորդ գլխում*, հեղինակը ներկայացրել է սոցիոլոգիական հարցումը, որպես հետազոտության հիմնարար ընտրություն, նպատակ է ունեցել բացահայտելու ուսումնասիրվող օբյեկտի սոցիալ-ժողովրդագրական բնութագիրը, նաև տեղեկատվություն առողջության իրական վիճակի, ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության վերաբերյալ՝ ըստ իրենց սեփական գնահատման: Առողջ ապրելակերպի ձևավորման համալիր բնույթը պահանջում էր նրանց իրական գործողությունների ուսումնասիրում, որոնք նախընտրում են դպրոցականները առողջության ամրապնդման և պահպանման համար, նպատակների բացահայտում, որոնք նրանք դնում են իրենց առջև, և խնդիրների բացահայտում, որոնց պատճառով նրանք երբեմն չեն ցանկանում հետևել իրենց առողջությանը: Քննարկվել են նաև ֆիզիկական կուլտուրայի, այլ առարկաների ուսուցիչների և ծնողների շրջանում անցկացված հարցման արդյունքները «Առողջ ապրելակերպ» դասընթացի բովանդակության, թեմաների վերաբերյալ և որոշվել է ուսումնասիրությունները սկսելու տարիքային խումբը:

Սոցիոլոգիական հարցման արդյունքում, հեղինակին հաջողվել է ցույց տալ, թե ինչպիսին է ընդհանուր իրավիճակը. ինչպես են ձևավորվում, դրսևորվում և իրականացվում արժեքային կողմնորոշումները և վերաբերմունքը առողջության և առողջ ապրելակերպի նկատմամբ հանրակրթական ուսումնական հաստատությունների 5-12-րդ դասարանների աշակերտների շրջանում:

Ատենախոսության *երրորդ գլխում*, Ս.Խաչատրյանը ներկայացնում է, որ նախնական փորձարարական հետազոտությունների հիման վրա մշակել է 5-7-րդ դասարանների աշակերտների առողջ ապրելակերպի ձևավորման հեղինակային ծրագրեր: Թեստավորման նպատակով, կազմվել են 5-7-րդ դասարանների աշակերտների



գիտելիքների ստուգման թեստեր, որոնք արտացոլել են յուրաքանչյուր տարիքի համար նախատեսված հեղինակային ծրագրի թեմաները: Աշխատանքում ներկայացվել է նաև գիտափորձին մասնակցած բոլոր աշակերտների շարժողական պատրաստվածության ցուցանիշների տեղաշարժերը: Հայցորդը եզրակացրել է, որ հեղինակային ծրագրի փորձարկման արդյունքում, իրեն հաջողվել է լուծել կրթական մի շարք խնդիրներ. 5-7-րդ դասարանների աշակերտների մոտ ձևավորվել է պատասխանատվություն սեփական առողջության նկատմամբ, առողջ ապրելակերպի կանոնների, պահանջների պահպանման կարողությունների, հմտությունների և գիտակցված կողմնորոշման՝ համապատասխան գիտելիքների ձեռքբերման ուղղությամբ:

Վերլուծելով ատենախոսական աշխատանքը, հարկ ենք համարում նշել հետազոտության արժեքավոր կողմերը.

- հեղինակի կողմից կատարվել է ուսումնասիրվող հիմնահարցի վերաբերյալ ժամանակակից գրական աղբյուրների խորը վերլուծություն, ինչը թույլ է տվել բացահայտել առկա խնդիրները և առաջադրել դրանց լուծման ուղիները՝ կիրառելով գիտական հետազոտության արդի մեթոդների լայն շրջանակ,

- 5-7-րդ դասարանների աշակերտների առողջ ապրելակերպի ձևավորման համար առաջին անգամ մշակված ծրագրի ներդրումը ֆիզիկական դաստիարակության գործընթացում դրական ներգործություն ունեցավ՝ առողջության ամրապնդման ու պահպանման գիտակցական կողմնորոշման և սովորությունների հմտությունների, ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտում գիտելիքների մակարդակի բարելավման, ֆիզիկական վարժությունների կանոնավոր կատարման և տարբեր մարզաձևերում ներգրավվածության ուղղությամբ:

- Բացահայտվել է դրական վերաբերմունքի կայուն շարժընթաց առողջ ապրելակերպի նկատմամբ, դեռահասների մոտ ձևավորվել է արժեքային վերաբերմունք սեփական առողջության նկատմամբ, նրանք ձեռք են բերել գիտելիքներ, հմտություններ և սովորույթներ առողջ ապրելակերպի ձևավորման վերաբերյալ, բարձրացել է պատասխանատվության զգացումը սեփական առողջության նկատմամբ:

Դրական գնահատելով կատարված հետազոտությունը և կարևորելով ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը, հարկ ենք համարում նշել որոշ դիտողություններ.



1. Աշխատանքում հեղինակը նշում է «Առողջ ապրելակերպ»-ի ձևավորման մանկավարժական պայմանների մասին, ցանկալի է, որ պարզաբանվի, թե հետազոտությունն անցկացրած դպրոցներից քանիսում է հնարավոր ապահովել այդ պայմանները:

2. Ձևավորվող մանկավարժական գիտափորձը տևել է մեկ ուսումնական տարի, 28 ժամ տևողությամբ (14 ժամ դասարանային, 14 ժամ արտադասարանային): Կարծում ենք, որ արժանահավատ արդյունքներ ստանալու համար կարելի էր գիտափորձը կազմակերպել 2 ուսումնական տարով՝ 56 ժամ տևողությամբ:

3. Ամփոփված մանկավարժական գիտափորձի արդյունքները կարելի էր ներկայացնել երեք աղյուսակների տեսքով: Մասնավորապես, 23-րդ աղյուսակը:

4. Կարծում ենք, որ ժամանակավրեպ է եղել գիտափորձի ծրագիրը նշել որպես հեղինակային ծրագիր, քանզի այն հիմնավորված չի եղել գիտափորձի արժանահավատ և հիմնավորված արդյունքներով:

5. Ծրագրում նշված չէ շարժողական ընդունակությունների մշակման վարժություններ, սակայն աղյուսակ 27, 28-ում նշված են տղաների և աղջիկների արագաշարժության, ուժային և արագաուժային ընդունակությունների դրական տեղաշարժեր: Ցանկալի է պարզաբանել դրական տեղաշարժերի հիմնավորվածությունները:

6. Ցանկալի կլիներ, որ հեղինակը իր հետազոտությունների հիման վրա մշակեր ուսումնամեթոդական ձեռնարկներ՝ ուսուցիչների, աշակերտների և ծնողների համար:

Սակայն վերոնշյալ դիտողությունները ամենևին չեն նվազեցնում աշխատանքի բարձր գնահատականը, այն կատարված է պատշաճ գիտական մակարդակով և համապատասխանում է ատենախոսական աշխատանքի կատարմանը ներկայացվող պահանջներին: Մեղմագիրը և հրատարակված հոդվածները համապատասխանում են ատենախոսությանը, լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ


Հետազոտության թեմայի արդիականությունը, նրա գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև, ստացված արդյունքների ու եզրակացությունների հավաստիությունը և հիմնավորվածությունը, հիմք են



հանդիսանում փաստելու, որ Սաթենիկ Գառնիկի Խաչատրյանի «Առողջ ապրելակերպի դասավանդման մեթոդիկան ֆիզիկական կուլտուրայի դասերին» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, ունի կարևոր տեսական և կիրառական նշանակություն, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (ֆիզիկական կուլտուրա և սպորտ) մասնագիտական թվանիշին, իսկ նրա հեղինակն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և ընդունվել է ՎՊՀ-ի «Արվեստի և սպորտի» և «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնների 06.04.2023թ. համատեղ նիստում (արձանագրություն թիվ 15):


Նիստին մասնակցել են՝ «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի վարիչ՝ մ.գ.թ., դոցենտ Լ. Բաղդասարյանը, «Արվեստի և սպորտի» ամբիոնի վարիչ՝ մ.գ.թ., դոցենտ Ա.Բարսեղյանը, ամբիոնների դասախոսներ՝ մ.գ.դ., պրոֆեսոր Պ. Գևորգյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Վ. Ղարազյոզյանը, պրոֆեսոր Ս. Հարությունյանը, մ.գ.թ., դոցենտներ՝ Վ.Նազարյանը, Լ. Հարոյանը, Ս. Բեժանյանը, Ա. Հովհաննիսյանը, Ք.Վիրաբյանը, հ.գ.թ., դոցենտներ՝ Հ. Ավագիմյանը, Ա. Ղազարոսյանը, Ն. Կոստանդյանը, Վ.Միրզոյանը, Ս. Մազմանյանը, դոցենտներ՝ Գ.Մացակյան, Զ. Էվոյանը, Հ. Սարգսյանը, Գ. Շահվերդյանը, Մ.Նուրիջանյանը, Հ.Հակոբյանը, Հ.Չատինյանը, Թ.Մելիքյանը, Ռ.Ամիրբեկյանը, Կ.Երիցյանը, Ա.Հովհաննիսյանը, ասիստենտներ՝ Ս.Բարսեղյանը, Ն. Պապանյանը, Ն. Ներկարարյանը, Լ. Մարուքյանը, մ.գ.թ. Լ. Դանիելյանը, դասախոսներ՝ Ա. Խաչատրյանը, Ս.Մկրտչյան, Գ.Վարդանյան, Ս. Սիրադեղյան, Ն. Վարդանյան, Գ. Մինասյան, Վ. Շահրազյան, (38 հոգի):

Արվեստի և սպորտի ամբիոնի վարիչ՝  /մ.գ.թ., դոցենտ Ա. Բարսեղյան
Մանկավարժության և հոգեբանության

ամբիոնի վարիչ՝  /մ.գ.թ., դոցենտ Լ. Բաղդասարյան

Ստորագրությունները հաստատում եմ՝

ՎՊՀ գիտ. քարտուղար  /մ.գ.թ., դոցենտ Ս. Բեժանյան



«04» 04 2023թ.